

ԿԿՈՒ

ՄԱՆԿԱԴՊԱՏԱՆԵԿԱՆ ԹԵՐԹԻԿ



Թի 28


ՅՈՒՆԻՍ Գ. 2019

ՄԵՂՈՒՆ ՈՒ ՅԱԵ




Յաւը մեղուին վրայ ծիծաղելով կ'ըսէ.

- Ի՛նչ անշնորհք ճանճ ես դուն, ամբողջ օրը ծաղիկէ-ծաղիկ կը թռչկոտիս եւ օգուտ մը չունիս:
- Իսկ դո՛ւն, հաւի՛կ, ի՞նչ կը շինես,- հարցուց մեղուն:
- Միթէ չէ՞ս գիտեր, թէ ի՛նչ կը շինեմ, ես քեզի պէս պարապ-սարապ չեմ տգտգար: Ես օրը մէկ հաւկիթ կ'ածեմ, գիտե՞ս մէկ հաւկիթը քանի է:
- Գիտեմ, գիտեմ, հասկցայ: Բայց ես կը կարծեի դուն օրը հարիւր հաւկիթ կ'ածես:
- Ինչպէ՞ս կարելի է օրը հարիւր հաւկիթ ածել, անխե՛ղք մեղու:
- Յապա եթէ քու ածածդ ընդամենը մէկ հաւկիթ է, ուրեմն ինչո՞ւ հարիւր անգամ կը կէկչաս, «*լսեցէ՛ք, հաւկիթ ածեր եմ*»: Իմ կարծիքովս՝ այսքան կէկչալուդ մէկ հաւկիթը շատ քիչ է: Այնպէս չէ՞, իմաստո՛ւն հաւիկ:
- Բայց դո՛ւն ի՛նչ կը շինես, դո՛ւն, որ իմ մէկ հաւկիթս քիչ կը համարես:
- Ես ինչ որ կը շինեմ, քեզի պէս կէկչալով չեմ յայտնէր ուրիշներուն: Ես մեղր կը շինեմ: Գիտե՞ս ինչ է մեղրը: Այդ հաւու կերակուր չէ, քու խելքդ չի հասնիր, հաւի՛կ:



ՄԵՐ ԱՐԻՒՆԸ



Արիւնը կարելու է մեր մարմնի աշխատանքին եւ գոյատեւման: Ան կը փոխադրէ թթուածին եւ սննդանիւթեր, որոնք կը սնանեն մարմնի բջիջները, ինչպէս նաեւ այլ նիւթեր, որոնք կը պայքարին վարակներու դէմ: Չափահաս մը կ'ունենայ 5-6 լիթր արիւն:

Արիւնը կազմուած է երկու բաժիններէ,

Ա.- Արիւնահեղուկ (plasma), որ կը կազմէ արեան 55%-ը:

Բ.- Երեք տեսակ բջիջներ՝ կարմիր գնդիկներ, ճեղմակ գնդիկներ, թիթեղիկներ (platelets):

Այս երեք տեսակ բջիջները, որոնք կը կազմուին ոսկրածուծին մէջ, կը լողան ազատօրէն արիւնահեղուկին մէջ:

Կարմիր գնդիկները կը պարունակեն երկաթով հարուստ բնասպիտ մը՝ արիւնասպիտակուց (hemoglobin), որ կը փոխադրէ թթուածինը մարմնի բոլոր բջիջներուն:

Ճեղմակ գնդիկները կը պաշտպանեն մարմինը ժահրերէ: Վարակի մը պարագային անոնք շուտով գործի կը լծուին եւ կը պայքարին յարձակող ժահրերուն դէմ:

Թնթեղները աւելի պզտիկ են քան կարմիր գնդիկները, անոնց պարտականութիւնն է արեան մէջ արիւնակոյտեր (blood clotter) կազմել եւ արգելք հանդիսանալ արիւնահոսութեան:

Արիւնահեղուկը բնասպիտներով հարուստ դեղնորակ հեղուկ մըն է:


Մէկ կաթիլ արիւնը կը պարունակէ մօտաւորապէս 5 միլիոն կարմիր գնդիկ:

Արեան խմբաւորումներու դասակարգումներէն ամենէն ընդհանրացածներն են.

1.- ABO դասակարգումը, որ ունի A, B, AB եւ O խմբաւորումները:

2.- Rh դասակարգումը, որ ունի Rh+ եւ Rh- խմբաւորումները:

Յիմնականօրէն մեզմէ իւրաքանչիւրը կ'ունենայ հետեւեալ արեան 8 խմբաւորումներէն մէկը՝ ARh+, ARh-, BRh+, BRh-, ABRh+, ABRh-, ORh+ եւ ORh-:



ԹԻՒԸ ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՈՒԹԱՅ ԿԱՌԵԱՆ-ՏԻՔՄԻԲԵՏԱՆ
ՆԿԱՐԱԶԱՐՈՒՄԵՑ՝ ՈԱՖՅԻ ՔԵՇՈՇԵՏԱՆ

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ

ԿԱՐԴԱԼ ԳԻՏՅՈՂ ՄԱՏԱՆԻՆ

Նախապես կոյր անձերը միայն մեկ միջոց ունեին գիրք մը կարդալու համար՝ պրայ լեզուով տպուած գիրքը: Գիրքին էջերը ծածկուած են գիրքերը յիշեցնող ցցո՛ւն կէտերով:

Այժմ ընթերցանութեան նոր միջոց մը պատրաստուած է: Անկա տարօրինակ ձեւ մը ունի. անկա մատանի մըն է՝ «Այրինկ» կոչուած օղակ մը, որ օժտուած է մանր քամերայով մը: Այս օղակը կ'անցուի մատին վրայ՝ քամերան դեպի գրութիւնը ուղղուած:

Քամերան պիտի նկարէ գրութիւնը եւ նոյն ժամանակ գայն «թարգմանէ»: Ապա համակարգիչի ձայնը այդ գրութիւնը պիտի արտասանէ: Մատանին պզտիկ թրթռացումով մը կը յուշէ, երբ էջը դարձնելու պահը հասնի:

ՄԵՔՍԻՔԱՅԻ ՄԷՋ ՊԱՅՈՒԱԾ ԳԱՆՁԵՐ

Թեթիհաւաքան Մեքսիքայի հնագիտական ամենէն կարելոր վայրերէն մէկն է: Անկա կառուցուած է աւելի քան 2000 տարի առաջ: Անոր ամենէն կարելոր շինութիւններէն մէկուն՝ փետուրով օձի բուրգին տակը հնագետները գտած են գաղտնի անցք մը: Ան գոցուած էր 1800 տարի առաջ:

Անցքը կը գտնուի 18 մեթր գետնին տակ:

Յատուկ մարդամեքենաներով կարելի եղած է հոն հասնիլ՝ առանց բան մը փճացնելու:

Անոր մէջ մասնագետները գտած են աւելի քան 70 հազար առարկաներ, որոնք հաւանաբար մեռելներուն ընծաներ եղած են:



ՊԱՅՈՒԱԾ ԲԱՌ

Պահուած բառը գտնելու համար, նախ փորձեցէ՛ք ամբողջացնել ծայրագոյն արեւելքի նշուած երկիրներուն մայրաքաղաքներուն պակսող տառը, ապա այդ տառերը միացնելով կազմեցէ՛ք պահուած բառը:

Հիւսիսային Քորեա	Փ	ի	ն	ն		Ե	ա	ն	կ				
Վիեթնամ	Հ		ն	ն	յ								
Ֆիլիպին		ա	ն	ի	լ	ա							
Թայլանտ	Պ		ն	ք	ն	ք							
Հարավային Քորեա	Ս	է	ն		լ								
Մալեզիա	Ք		ւ	ա	լ	ա	Լ	ա	մ	ք	ն	ւ	ր
Ինտոնեզիա	Ճ	ա	ք	ա		թ	ա						

մարտի 1, մտմ գոսպուս

ԹՈՒՄԲԱՆԱԿԱՆ Ո՞Ր ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԸ

Իւրաքանչիւր շարքի բոլորակին մէջ դրէք յարմար թուաբանական գործողութիւնը 1000 ունենալու համար:

- 20 ○ 50=1000
- 6000 ○ 6=1000
- 200 ○ 800=1000
- 560 ○ 440=1000
- 1099 ○ 99=1000
- 4 ○ 250=1000
- 125 ○ 8=1000
- 890 ○ 110=1000

ԺՊԻՏ


- Հրա՛կ, ինչո՞ւ թերթը սառնարանը դրիր:
- Աւելի թարմ լուրեր ունենալու համար:

* * *

- Աղջի՛կս, ինչո՞ւ այսքան ցած նիշ առած ես գրաւորին:
- Բացակայութեան պատճառով:
- Չհասկցայ, այսինքն բացակա՞յ էիր գրաւորին:
- Ո՛չ, բայց քովս նստող ընկերուհիս բացակայ էր:

ՊՈՉԱՏ ԱՂՈՒԷՍԸ

Յովհաննես Թումանյան



Կար ու չկար, պառաւ մը կար: Այս պառաւը կը կթէ իր այծը, մէկ կողմ կը դնէ կաթը, կ'երթայ ցախ ու փայտ բերելու, որպէսզի կրակ պատրաստէ ու կաթը եփէ:

Աղուես մը կու գայ, գլուխը կը խորթ կաթի ամանին մէջ ու կը խմէ զայն:

Պառաւը վրայ կը հասնի, ցաքատով կը զարնէ ու աղուեսին պոչը կը կտրէ: Պոչատ աղուեսը կը փախչի, կ'երթայ քարի մը վրայ կը կանգնի ու այսպէս կը խնդրէ.

- Տատի՛կ, տատի՛կ, պոչս տո՛ւր, կցեմ, կցմցեմ, երթամ ընկերներու հասնիմ, որպէսզի ինծի չըսեն՝ պոչա՛տ աղուես, ո՞ւր էիր: Պառաւը կ'ըսէ.

- Տէ՛, գնա՛, իմ կաթս բե՛ր:

Աղուեսը կ'երթայ կովուն քով:

- Կովի՛կ, կովի՛կ, կա՛թ տուր ինծի, կաթը տանիմ պառաւին տամ, պառաւը ինծի պոչս տայ, կցեմ, կցմցեմ, երթամ ընկերներու հասնիմ, որպէսզի ինծի չըսեն՝ պոչա՛տ աղուես, ո՞ւր էիր:

Կովը կ'ըսէ.

- Տէ՛, գնա՛, ինծի համար խո՛տ բեր:

Աղուեսը կ'երթայ արտին:

- Արտի՛կ, արտի՛կ, խո՛տ տուր ինծի, խոտը տանիմ կովուն տամ, կովը ինծի կաթ տայ, կաթը տանիմ պառաւին տամ, պառաւը ինծի պոչս տայ, կցեմ, կցմցեմ, երթամ ընկերներու հասնիմ, որպէսզի ինծի չըսեն՝ պոչա՛տ աղուես, ո՞ւր էիր:

Արտը կ'ըսէ.

- Տէ՛, գնա՛, ինծի համար ջո՛ւր բեր:

Աղուեսը կ'երթայ աղբիւրին:

- Աղբի՛ւր, աղբի՛ւր, ջուր տուր ինծի, ջուրը տանիմ արտին տամ, արտը ինծի խոտ տայ, խոտը տանիմ կովուն տամ, կովը ինծի կաթ տայ, կաթը տանիմ պառաւին տամ, պառաւը ինծի պոչս տայ, կցեմ, կցմցեմ, երթամ ընկերներու հասնիմ, որպէսզի ինծի չըսեն՝ պոչա՛տ աղուես, ո՞ւր էիր:

Աղբիւրը կ'ըսէ.

- Տէ՛, գնա՛, կո՛ւժ բեր:

Աղուեսը կ'երթայ աղջկան:

- Աղջի՛կ, աղջի՛կ, կո՛ւժ տուր, կուժը տանիմ աղբիւրին տամ, աղբիւրը ինծի ջուր տայ, ջուրը տանիմ արտին տամ, արտը ինծի խոտ տայ, խոտը տանիմ կովուն տամ, կովը ինծի կաթ տայ, կաթը տանիմ պառաւին տամ, պառաւը ինծի պոչս տայ, կցեմ, կցմցեմ, երթամ ընկերներու հասնիմ, որպէսզի չըսեն՝ պոչա՛տ աղուես, ո՞ւր էիր:

Աղջիկը կ'ըսէ.

- Տէ՛, գնա՛, ուլո՛ւնք բեր ինծի համար:

Բառեր եւ բացատրութիւններ
Ցաքատ- հաստ դանակ, ճիւղ կտրելու համար
Պոչատ- պոչը կտրած
Կցմցել- հարեանցի միացնել, կցել



(Շարունակելի)

Ի՞ՆՉ ԿԸ ՆՇԱՆԱԿԷ ԽՃԱՆԿԱՐ



Խճանկարը շատ սիրուած գարդարանք մըն էր հին քաղաքակրթութիւններուն համար: Սակայն ան մինչեւ այսօր ունի իր հետեւորդները:

Ահա կարճ պատմութիւն մը, այս հին արուեստին մասին:

Վեց հազար տարի առաջ Միջագետքի մէջ մեզի ծանօթ առաջին խճանկարները վեց հարիւր տարուան հնութիւն ունի, անոնք գտնուած են Ուրուքի մէջ, Միջագետքը ներկայի Իրաքն է: Այդ շրջանին մէջ բնակող շումերները կը գործածէին խիճեր, սակայն նաեւ այրած կարմիր, ճերմակ կամ սեւ հողէ քարեր: Տակաւին մինչեւ այսօր խիճեր կը գործածուին արդի խճանկարներ շինելու համար:

Յոյներու ժամանակ

Ք.ա. 5-րդ դարէն սկսեալ յոյները կը սկսին խճանկարներուն մէջ գործածել քար եւ ապակի, որոնք խիճերէն աւելի տափակ են, եւ կարելի է աւելի փոքրիկ կտորներու վերածել: Հետեւաբար պատկերները եւ գարդարանքները աւելի նուրբ են, մարդիկը, անասունները, բոյսերը... Այս թեքնիքը (հնարքը) տակաւին կը գործածուի մինչեւ այսօր:



Հռոմէացիները՝ յոյներուն նման

Հաստատօրէն գիտենք, որ հռոմէացիները շատ բաներ առած են յոյներէն մինչեւ իսկ՝ անոնց աստուածները... Եւ անշուշտ խճանկարը, որուն *թեքնիքը* տարածած են ամբողջ իրենց կայսրութեան մէջ՝ պատերուն վրայ, առաստաղներուն վրայ, գետինը: Անոնք տոկացած են մինչեւ այսօր, ու մենք կրնանք տակաւին զմայլիլ անոնց գեղեցիկ գոյներով:

Կրօնական արուեստ մը


Այս *թեքնիքը* գործածուած է առաջին եկեղեցիներուն մէջ Իտալիոյ Ռավեն շրջանին մէջ, ուր կը զարգանայ բիզանդական խճանկար կոչուած այս արուեստը՝ 5-րդ եւ 6-րդ դարերուն:

Մահմետականներն ալ, Քրիստոնեաներուն նման, կը գործածեն խճանկարները՝ գարդարելու համար իրենց մզկիթները եւ տուները՝ ներսէն եւ դուրսէն: Սակայն անոնք կը ներկայացնեն յատկապէս երկրաչափական կամ բնութեան վերաբերեալ գարդարանքներով:



Արթ Տեքօ եւ ստեղծագործական ժամանց

19-րդ դարուն, Արթ տեքօ գեղարուեստական ոճին շնորհիւ, խճանկարը դարձեալ նորոյթ կը դառնայ: Բազմաթիւ արուեստագետներ եւ ճարտարապետներ կը գործածեն այս *թեքնիքը*: Անոնցմէ կարելի է յիշել Անթոնիօ Կաուրի, Մարք Շակալ, Կիւսթաւ Զլիմթ...



Այժմ փոքր տարիքէն արդէն կարելի է խճանկար կազմել տարբեր նիւթեր գործածելով: Անոնցմով կարելի է գարդարել թաղարներ, տուփեր, հայելիներ... Պետք ունիս պարզապէս քիչ մը երեւակայութեան եւ քանի մը տարբեր նիւթերու: